ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2021թվականի N 10

ԶՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 7 Փ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշմների, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի, հաշվի առնելով Գևորգ Կարապետյանի կողմից տրված 2021թվականի հունվարի 25-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Կոտայքի մարզի Զրառատ համայնքի 7-րդ փողոց 2 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 0.12327 հա մակերեսով հողամասում (սեփ. վկայական թիվ 12082019-07-0027, ծածկագիր 0020-0002) ինքնակամ կառուցված 389.68քմ արտաքին մակերեսով կիսակառույց շինությունը համարել Զրառատ համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:

2.1)Կիսակառույց շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)Կիսակառույց շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3)Կիսակառույց շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք

3. Հաստատել «Աշոտ Հակոբյան Գուրգենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված կիսակառույց շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը /կցվում է/:

4. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

5. Ուժը կորցրած ճանաչել Զրառատ համայնքի ղեկավարի 2021թվականի փետրվարի 25-ի «Զրառատ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված շինությունը համայնքի սեփականություն համարելու, օրինականացնելու մասին» թիվ 07 որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. _____

գ.Զրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՐՏԻ 2021թվականի N 11

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Հաստատել «ԳԵՈԼԵՆԴ» ՍՊԸ –ի կողմից տրված Ջրառատ համայնքի 1-ին փողոց թիվ 1 հասցեում գտնվող դպրոցի և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 1.405592 հա հողամասի /ծածկագիր 0006-0001/ հատակագիծը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20__ թ. _____
գ.Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՐՏԻ 2021թվականի N 12

ԶՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Զրառատ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 42-Ն որոշումն՝ որոշում եմ.

1. Զրառատ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 15-ի «Զրառատ համայնքի 2021թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 42-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումները.

1.1.1.51 ծրագրի 4213 հոդվածի «12000» թիվը փոխարինել «0» թվով
1.1.1.51 ծրագրի 4212 հոդվածի «621600» թիվը փոխարինել «574500» թվով
1.1.1.51 ծրագրի 4234 հոդվածի «70000» թիվը փոխարինել «0» թվով
1.1.1.51 ծրագրի 4269 հոդվածի «0» թիվը փոխարինել «200000» թվով
4.2.4.57 ծրագրի 4657 հոդվածի «2600000» թիվը փոխարինել «2579100» թվով
8.2.4.51 ծրագրի 4237 հոդվածի «50000» թիվը փոխարինել «0»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
25 ՄԱՐՏԻ 2021թվականի N 13

ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 7 Փ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն, 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն, 2005թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1858-Ն որոշումների, Ջրառատ համայնքի ավագանու 2021թվականի մարտի 15-ի թիվ 12 որոշման, հաշվի առնելով Գևորգ Կարապետյանի համաձայնությունը՝ *որոշում եմ.*

1. Ջրառատ համայնքի սեփականություն հանդիսացող /սեփ. վկայական թիվ 15032021-07-0125/ 7 փողոց 2 հասցեում գտնվող անասնաշենքը՝ 389.68 քառակուսի մետր արտաքին մակերեսով, 347.60 քառակուսի մետր ներքին մակերեսով, պահեստը՝ 55.59քառակուսի մետր արտաքին մակերեսով, 42.41 քառակուսի մետր ներքին մակերեսով և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0.12326 հա մակերեսով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Գևորդ Կարապետյանին:

2. Շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

Շինությունները, համաձայն համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

Շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1/ անասնաշենքի և պահեստի 1 քառակուսի մետրի համար՝ 1720 /մեկ հազար յոթ հարյուր քսան/ դրամ /տարածագնահատման 12-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.086/.

2/ Առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 528 /հինգ հարյուր քսան ութ/ դրամ:

4.Գևորգ Կարապետյանը պարտավոր է վճարել.

1/ համայնքապետարանի 900125001603 հաշվեհամարին՝ 765 864 /յոթ հարյուր վաթսուն հինգ հազար ութ հարյուր վաթսուն չորս/ դրամ՝ անասնաշենքի և պահեստի գինը.

2/ Համայնքապետարանի 900125009101 հաշվեհամարին՝ 650 812 /վեց հարյուր հիսուն հազար ութ հարյուր տասներկու/ դրամ՝ հողամասի գինը:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Գևորգ Կարապետյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

20__թ. _____ __

գ.Ջրաբերդ